

144

891.99

          
G-38



18 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ե. Տ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

194

# ՈՒԽՏԻՆ ՈՂԶԱԿԷԶԸ

ԿԱՄ

## ԿՈՅՍ ՄՆԱՑԱԾ ԿԻՆԸ

ՎԻՊԱԿ ՊՕԼՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ԱՌՆՈՒԱԾ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ




821.99  
Ե-38

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԳՆԱՆ

Կալաթա, Կ. Պոլիս.

1909



891.99 Ե. Տ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Ե-38



# ՈՒԽՏԻՆ ՈՂԶԱԿԷԶԸ

ԿԱՄ

## ԿՈՅՍ ՄՆԱՑԱՌ ԿԻՆԸ



ՋԻՊԱԿ ՊՕԼՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ԱՌՆՈՒԱԾ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. ՍԱԴԱԵԱՆ

Կալաթա, Կ. Պոլիս.

1909

05.04.2019

35 543-4.7.



18894-59

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ամուսնական բարեբու մեջ գաղտնի մնացած էջի մը ընդօրինակութիւնն է ներկայ զբոյլս, ուղղուած մասնաւորապէս անոնց՝ որոնց վրայ ամուսնական կեանքի նուիրականութիւնն յարգանք չազդեր, ու մէն մի շունջի առջեւ որ փափաք մը, կիրք մը կը ծնի իրենց մեջ կը խոնարհին քրտուցիկային անհաստատութեամբ. եւ ընդհանրապէս անոնց ալ որոնք կուզեն հիանալ վսեմութեան վրայ ողջակիզումի մը որ կարենայ երբեք կասարուիլ հիմկենեան խորանին առջեւ:

Ո՛վ գիտէ. քերեւս ընթերցողներես մէկը ըլլայ նաեւ ինձ մտերիմ այն անձն որ զբոյլիս մեջ Զարեհ անունով նանչուած հերոսն է, եւ որ այս գաղտնի էջն ինձ պարգելու պատիւն ըրած է. պիտի խնդրեի իրմէ որ, ի սէր մարդկութեան, բող ներէ ինձի երբ չեմ կրնար ինքզինես ազգիլի հրապարակելու գաղտնիքն ազնիւ կնոջ մը, որ դարավերջիկ հակօրինակելի բարեբու մեջ ալեկոծուող անձերէն ոմանց համար՝ ազատարար տիպար մ'ըլլալու կոչուած է գուցէ:





# ՈՒԽՏԻՆ ՈՂԶԱԿԷԶԸ

ԿԱՄ

Կ Ո Յ Ս Մ Ն Ա Ց Ա Մ Կ Բ Ն Ը



Ժամը իրիկուան մէկին սովորականին պէս առանձինն նստած էին բազմարանի մը վրայ, Նարդիկ և իւր ամուսինը Պ. Սեփոն. և բարձրաձեղուն սենեակին պատէն զամուսնած լամպարին զօրաւոր լոյսը կը լուսաւորէր տիկինին ամբողջ երեսը, իսկ պարոնին կիսադէմը:

Սենեակին պատերէն երկուքը կը ցուցադրէին դէմ առ դէմ ընտիր պատկերներու պէսպիսութիւն մը. ասոնց մէջ երկու նշանակելի դիւրքեր բռնած էին «Մկրտութիւն Տրդատայ» մը, և «Քրիստոսի Խաչելութիւնը». երրորդ պատին առջև կը բարձրանար խոշոր պիւրօ մը որուն վրայ ճաշակաւոր շեղումով մը զետեղուած էր գունազեղ շղարչներու սեթեւեթով շրջապատուած մեծ հայելի մը, սեթեւեթ մը զոր աւելի կը գունազեղէր հայելիին երկու կողմերը ճարտնական ողորահիւս խտիրներու վրայ շարուած այցաքարդերու և պատկերալից քառթ փոսթալներու բազմազանութիւնը. հայելիին վերեւն ալ կը հսկէր Պ. Սեփոնի մեծադիր կենդանազիրը: Իսկ տախտակամածին և ըստմարաններուն վրայ փռուած քրդական հազուադիւտ կապիւրտներու և տաճկական ազնիւ գորգերու ճուխութիւնը երեւան կը բերէին ոչ թէ միայն հարստութեան հրապուրիչ նկարագիրն, այլ ազնիւ ճաշակի մը վայելչութիւնն ու հմայքը:

Նարդիկին ամուսինը վաթսուներեց մարդ մըն էր. դէմքը նիհար էր բայց ոսկրուտ. թիկնեղ քամակին աջ կողմը, անբակը տխուր ցցունք մը կազմած էր վերարկուին վրայ, և իւր փը-

չացած թաւ յօնքերուն շուքն աւելի կը պղտորէր իւր խոշոր աչքերուն աղօտացած փայլը :

Այս մարդուն վրայ ամէն ինչ, փառայեղ կերպարանքի մը վաղահաս ծիւրումը կը մատնանշէր :

Իսկ Նարդիկ, հազիւ քսանեւութ տարու կար, դէմքն աւելի տժգոյն էր քան սպիտակ. անկիւնները թեթեւակի վեր ցցուած ճակտին լայնութիւնը տեսակ մ'առնական արժանապատուութիւն տուած էր իր դէմքին, աւելի ազնիւ քան գեղեցիկ, աւելի վայելուչ քան հրապուրիչ. իւր խորունկ և — սանկ ըսենք — բարութեան մէջէն նայող աչքերն ամէն անգամ որ ուղղուէին իւր ծեր ամուսնոյն, կը փայլէին արգահատալից գուրգուրանքով մ'որու քաղցր ճնշումին ներքեւ կարծես՝ իւր թուխ ու չքնաղ գլուխը թեթեւ մը մէկ քովին կը հակէր, և այնպէս կը մնար մինչև որ հառաչ մը զանիկա վեր շտկէր :

Այս երկու անձերու մէջ երկար ատենէ ի վեր լռութիւն կը տիրէր, երբ Նարդիկ ձայնով մը որ չափազանց հոգածու ըլլալ կը թուէր, հարցուց.

— Պարո՛ն, ինչո՞ւ չենք խօսիր :

Պարոնն իւր կուրծքին վրայ ինկած գլուխը գրեթէ մեքենայաբար վեր առաւ և տկար ձայնով մը ըսաւ.

— Է՛հ այո՛, ինչո՞ւ չենք խօսիր, քանի որ վիշտ ունինք և խօսակցութիւնը կը մխրթարէ մեզ. որովհետեւ իւր տեւողութեան միջոցին մեզ կը մոռցնէ մեր ցաւերը. խօսինք, այո՛, խօսինք Նարդիկ... Ըայց ո՛հ, նեղացուցիչ բան է նիւթ չի գտնել այն միջոցին որ մարդ իւր սիրելիին հետ մինակ է... գէթ դու պատրաստ նիւթ մ'ունենայիր, Նարդիկ, որպէս զի անոր շուրջ գոնէ քրքրենք մեր խօսակցութիւնը :

— Կը ցաւիմ, պարոն, որ երբէք առաջին առիթ մը չէք փախցնե՛ր յիշելու համար ձեր վիշտը, որ չեմ հասկնար ի՞նչ է, և առաջ բերելու մխրթարութիւն բառը որ գէթ մեզ համար ներկայիս մէջ իմաստ մը չունի... վասն զի չեմ կրնար ըմբռնել

Թէ ինչո՞ւ պէտք է վշտակրիլ, երբ փա՛ռք Աստուծոյ, ոչինչ կը պակսի մեզ :

— Ներէ՛ ինծի, Նարդիկ, ես ծերացած՝ հետեւաբար մոռացկոտ եմ, միտքս մաշած է, հետեւաբար անխորհուրդ եմ. ըսէ՛ ինձ խնդրեմ, ի՞նչ կերպով կրնամ քեզ գո՛հ ընել :

— Խօսելով, միշտ խօսելով, կարեւոր բաներու վրայ առանց սակայն զանց ընելու անկարեւորները, անցած դարձած բաներու վրայ որչափ կարելի է մանրամասնօրէն. վերջապէս ամէն բանի վրայ խօսեցէք ինձ, բաւական է որ չի լռէք՝ վասն զի նախ որ մենք, կիներս խօսքի մարդ ենք. մեր ամենամեծ հաճոյքը խօսակցիլն է արդարեւ, և երկրորդ վասն զի, լռութիւնը, երբ մանաւանդ երկու սիրելիներու մէջ տիրէ, մտածմունքի կ'առաջնորդէ, մտածմունքն ալ յուետեսութիւն և անխմաստ վշտեր կը ծնի. կը տեսնէ՞ք, ձեր վշտակրութիւնն ուրիշ բան չէ եթէ ոչ լռութեան թողը, ըսաւ Նարդիկ, կարեկցութեամբ լի նայուածք մ'երկարելով իւր ամուսնոյն և ջանալով ժպտելու .

— Ա՛հ, գիտեմ թէ դու հրեշտակ մ'ես, Նարդիկ, որ տաք շրնչովդ կը հալեցնես ինչ որ սառ է, և նայուածքովդ կը կակղցնես ինչ որ քար է . . .

— Կը հասկնամ, տարբեր բառերով կրկնուած նոյն յանկերզը դարձեալ . . . կ'երեւի թէ այս գիշեր մտադրած էք զիս չի հասկնալու, պարոն :

— Կերեւի թէ դու ալ մտադրած ես, Նարդիկ, զիս շուարեցնելու ամէն անգամ որ բերանս բանամ . . . բայց ըսէ ինձ, ի՞նչ բանի վրայ կուզես որ խօսիմ քեզ :

— Ի՛նչ, նիւթի սովէն կը տառապիք, պարոն. խօսեցէք ինձ, օրինակի համար, վաճառատան դործերուն վրայ . . . ըսէք, ի՞նչ ջուրի մէջ են անոնք :

— Ո՛հ, կանոնաւոր ուզածիդ պէս. բայց կը հասկնաս անշուշտ թէ ոչ իմ շնորհիւս, վասն զի այլ եւս մաշած, քայքայուած եմ բոլորովին . . .

— Կարծեմ կրնայիք քիչ մը աւելի լաւատես ըլլալ, և «մաշած, քայքայուած» բառերը մեղմել, շատ մեղմել :

— Իրաւ է, այնպէս որ կրնայի «ծերացած եմ» ըսել :

— Կամ աւելի ճիշդը ըսել թէ քիչ մը տկար էք :

— Ինչ որ է, այո՛, մի քիչ տկար իմ, շարունակեց պարոնն իւր ամուսնոյն տուն տուած բառերը կրկնելով. և սակայն ասով ոչինչ կը կորսնցնեմ, որովհետեւ գոհունակութեամբ կը նշմարեմ թէ որքան ես տկարանամ, այնքան կը բազմապատկուի Զարէհին կորովը,

Այս անունը լսելուն Նարդիկ մինչեւ աչքերը կարմրեցաւ : Պարոնը շարունակեց .

— Հաւատա՛, Նարդիկ, շատ երջանիկ եմ որ Զարէհին պէս գործակատար մ'ունիմ որ իւր ամբողջ ճարպիկութիւնն ու կորովը կը գործածէ վաճառատանս օգտին համար . ինծի այնպէս կուգայ թէ ոչ ոք այս քաղքին մէջ իրեն կը հաւասարի այն պերճախօսութեան մէջ զոր գիտէ դնել անիկա յաճախորդներուս ուղղած իւր համոզկեր խօսքերուն մէջ, և վստահ եմ թէ ոչինչ այնքան կը շահագրգռէ զինք որքան վաճառատանս օգուտը : Ի՛նչ, պէտք է գոնէ քեզ խոստովանիմ, Նարդիկ, թէ իրեն ըրած փոխարինութիւնս, այսինքն այն վարձքը զոր իրեն կը վճարեմ, բաւական հեռու է համեմատական ըլլալէ իւր բոլորանուէր աշխատութեան հետ, վասն զի այո՛, Զարէհին պէս երիտասարդի մը անձնուէր աշխատութիւնը կարելի չէ փոխարինել նիւթական վարձքով . սակայն կը մխիթարուիմ մտածելով թէ իրեն համար լուրջ մտադրութիւններ ունիմ, և գէթ երբեմն ալ, իրաւամբ իրեն ըսելով թէ զինք այնքան կը սիրեմ, որքան պիտի սիրէի միայն զաւակ մը, եթէ ունենայի . . . և, ըսէ ինձ, Նարդիկ, միթէ զինք այնքան սիրելու պարտաւոր չե՞մ :

Նարդիկ ոչ այնքան անյողդողդ ձայնով

— Է՛հ, անշուշտ, ըսաւ, քանի որ այնքան կը դնահատէք իւր ծառայութիւնները . . . :

— Եւ քանի որ այնքան բարեացակամութիւն ունի ինծի նկատմամբ, և այնքան վեհանձն վերաբերութիւն իմ յաճախորդներուս հանդէպ . սակայն, Նարդիկ, ես պիտի գիտնամ

զինք վարձատրել այն համեմատութեամբ որով կամքս ու կարողութիւնս կը ներեն . այո՛ , կողեմ երջանիկ տեսնել զինքը , վասն զի այսքան արժանիքի տէր երիտասարդ մը պէտք է որ երջանիկ ըլլայ : Միտք մ'ունիմ , Նարդիկ , արդեօք դու ալ պիտի համաձայնի՞ս ինձի :

— Ի՞նչ է այն , հարցուց Նարդիկ թեթեւ մտատանջութեամբ :

— Ամբողջ խօսելու կարողութեամբս պիտի յորդորեմ զինքը որ ամուսնանայ :

Այս անգամ Նարդիկ բողբոլին ատուներեցաւ :

— Այո՛ , պիտի աշխատիմ , Նարդիկ , մանաւանդ պէտք է որ քեզ յայտնեմ թէ նոյն իսկ ընտրութիւն մ'ալ ըրած եմ , կը յուսամ թէ Ջարէհին համար ամենէն պատուաբեր թեկնածութիւնն առաջարկած կըլլամ , որով առաջարկս ալ ամենայն սիրով կընդունուի . որովհետեւ այն դոր ընտրած եմ ոչ թէ միայն կ'որիկ հարստութեան մը տէր էր արդէն , այլ նաեւ կոկիկ ժառանգութեան մը պիտի տիրանայ այս օրերս :

— Ո՞վ է արդեօք , ես ալ կը ճանչնամ դայն , հարցուց Նարդիկ բռնաղբօսիկ հանդարտութեամբ մը :

— Եղբօրս ազգկան տալը , օրիորդ Մաքրուհին , որուն ժառանգութեան խնդիրը կարգադրելու կոչուած ենք այսօր , ինչպէս երէկ ըսեր էի քեզ . . . բայց դու Նարդիկ , ի՞նչպէս կը զսնես ընտրութիւնս :

— Արդարեւ խիստ բարեյարմար ընտրութիւն , որովհետեւ շատ լաւ կը ճանչնամ այդ օրիորդը , և կընամ ըսել նաեւ թէ անիկա ոչ թէ միայն հարուստ է , այլ նաեւ պարկեշտ է , ուսեալ և մրանգամայն գեղեցիկ . . . :

— Ամեն կերպով յարմար մեր Ջարէհին , չէ՞ :

— Արդարեւ այնպէս է :

— Լաւ , ըսել է թէ մինք երկուքս համաձայն ենք այս մասին . կը մնայ հիմայ իւր գաղափարը շօշափել . բայց որովհետեւ մեր երկուքն այս մասին միաձայնած ենք , կը սկսիմ հաւատալու թէ Ջարէհ ալ ուրիշ առարկութիւն չը պիտի ընէ :

եթէ ոչ այն շուտիկ փափկանկատութիւնը զոր ցոյց կուտայ ամէն համեստ ու ամսեղուկ երիտասարդ երբ զիրենք նշանելու առաջարկութիւն ըլլայ իրենց . ինչպէ՞ս, խնդիրը զու՞ն ալ ին՞ծի պէս չե՞ս նկատեր :

— Կարծեմ այո՛ :

— Լաւ . . . ժամն ալ մէկը կը զարնէ, ատենն է որ երթամ . հիմայ ընկերներն ինձ կսպասեն . երթամ ուրեմն կարգադրելու մեր հարսնցուին ժառանգական խնդիրը կարելի եղածին չափ ի նպաստ իրեն նաեւ մեր Զարէնին :

Ու պարոնը, հակառակ Նարդիկի լաւատեսութեան, գրեթէ դանդաղելով, ոտքի ելաւ ու նախ սենեակէն և յետոյ տունէն դուրս ելաւ :

## Բ.

Երբ Նարդիկ մինակ մնաց, պահ մ'իւր էրկանը մահաբոյր կենդանագրին սեւեռեց իւր տխուր նայուածքը որ հետըզհետէ ամփոփուելով ուղղուեցաւ այն անորոշ աննշանակելի կէտին որ կարծես, ամէն մտախոհ մարդ իւր խորհուրդներուն ցոլացումը կը տեսնէ և զայն կը քննէ անքթիթ նայուածքով :

Նարդիկ խոր մտմտուք մ'ունէր :

Ի՞նչ կ'անցնէր արդեօք այս արարածին ներսիդին որ ատեն ատեն կը հառաչէր և իւր սիրուն գլուխը յետոյ կուրծքին վրայ կը ձգուէր իբր ծանրակիր լուծի մը ներքեւ : Ինչո՞ւ արդեօք բուրաստանի մէջ յածող դեղձանիկի պէս փարթամութիւններով շրջապատուած այս նորատի կնոջ ազնիւ դէմքը կը մատնէր տրտմութիւն մը խորունկ, կարծես յաւիտենական : Վերջապէս ինչո՞ւ իւր այս մտամուրրութեան, միջոցին երկուսնուամ ամենախորունկ տրտմութեամբ մը ըսած էր .

— Ո՛հ, դժբա՛ղդս :

Ծերութեան ատեն հառաչել կը նշանակէ յիշել, իսկ երիտասարդութեան մէջ հառաչել կը նշանակէ սիրել . . . Նարդիկ ալ կը սիրէր ուրեմն, ոչ թէ իւր ամուսինը սակայն որու կորաքամակ մարմնոյն մէջ բաբախող սիրտն զգայական ամենա-

քաղցր տրամադրութեան մ'առջեւ ընդարմացած պէտք էր ըլլալ և ուրիշ բանի համար չէր տրտիւն եթէ ոչ իւր կեանքին վերջին օրերուն թիզթազը զարնելու . այլ Նարդիկ կը սիրէր Զարէհը, իւր սրտին սիրելու ամբողջ կորովովը, ամբողջ բանաստեղծութեամբը . այո՛, Զարէհը, այսինքն իւր ամուսնոյն սիրելի գործակատարը :

Եւ սակայն ի՞նչ էր այդ սէրը :

Բարէ՛, առանց հրաքերնի խառնարանի մը կրակն ու բոցն էր որ կեռար ու կը յուզուէր իւր սրտին մէջ, դատապարտուած՝ դուրս չը ժայթքուելու :

Արդարեւ, նորատի կինը թէեւ տարիէ մ'իվեր կրակէ խուրձ մը կը կրէր իւր ներսիդին, և սակայն խղճահարական հայեցողութեամբ մը, թէ զինք խոհեմութեան հրաւիրող ուժեղ ներազդեցութենէ՞ մը, զսպուելով, չէր համարձակած տակաւին իւր սիրոյն յայտնութիւնն ընելու Զարէհին, որու ալ սրբտին մէջ յուզուած զգացումներու բուռն այլ խուլ պայքարը գուշակած էր երեքաքարչ սրտերու այն հաղորդականութեամբ ո՛ր միայն գիտէ հաշուել սիրատանջ սէրի մը խռովքը, կարելի է ըսել, անվրիպելի ճշդութեամբ : Եւ ոչ այսչափ միայն, Նարդիկ իր զգուշաւորութեան մէջ աւելի առաջ երթալով, նաեւ ջանացած էր իւր ներքին փոթորիկներն երէք չը մասնելու Զարէհին, իւր սրտին կրակին գոյնն իւր դէմքին վրայ ցոյց չի տալու, ու միշտ կը խուստիէր անոր վեհերոտ այլ քիչ մը յամառօրէն հետապնդող նայուածքէն որոնցմէ արձակուած կարճ այլ սուր նետերէն իւր սրտին խառնարանին քրքրուիլն ու վերարժարժուիլը կըզգար :

Սակայն հակառակ այս նախազգուշութեան, և գուցէ այս իսկ պատճառով, իւր սէրն ահագին համեմատութիւններ աւեր էր, այնպէս որ հիմայ, յուսահատ քայց անյողդողդ հրպատակութեամբ կը սնուցանէր սէր մը որ հետզհետէ զինք լրակեաց, մենասէր, երազող կը դարձնէր :

Իւր առանձնական երկարատեւ ինքնամփոփումներուն միջոցին՝ ցաւազին և անստոյգ մտասեւեռումներու ետեւէն

կընդնչմարէր թէ երջանիկ իրականութիւնը միշտ հետու է իրմէ, թէեւ դիտնար ալ թէ բաւական էր միայն անզգոյշ, յանդուզն քայլ մ'առնելու կամքն ունենալ այն բաղձալի իրականութեան գիրկը նետուելու համար որ այժմ երազ մ'էր միայն . . . :

Ինչո՞ւ արդեօք :

Թերեւս Նարդիկ, որու համար կըսենք ու կը կրկնենք թէ այնքան պարկեշտ էր որքան կարելի է որ ըլլայ կին մը, կը վախնար թէ, անգամ մ'որ բաղձանքի սահմանը դէք անցնէր, պիտի ստորնանար, պիտի գռեճկանար ինք իր առջեւ իսկ, և եթէ ոչ վճիռովն հանրութեան որմէ թերեւս կարենար պահել իւր պատուոյն գազանիքը, բայց նախ իւր խղճին դատաւճիռովը, և մանաւանդ վճիռովն այն մարդուն որ այսօր իւր մեղաակիցն ըլլալէ վերջը, վաղն իւր ամէնէն խիտ դատաւորը պիտի ըլլար, պիտի համարուէր մին այն կիներէն որոնց կեանքը տիղմերու մէջ կը քաշքշուի, և յիշատակն անէծքներով ու լուտանքներու մէջ կ'արտաբերուի . . . :

Ինչ որ ալ ըլլային Նարդիկի խորհուրդներն ու նկատումները, սա յայտնի էր որ նա կը սիրէր, բայց կը տառապէր, բաղձանքներով կ'եռար իւր ներսիդին, բայց կը մաշէր, և ամենատխուր դառնութեամբ մըն էր որ կը մեղքնար ինքզինքը, ցաւազինօրէն կրկնելով .

Ո՛հ, դժբաղդս :

Բացազանչութիւն մը զոր ամուսնոյն դուրս ելլելէն վերջն արդէն երկու հեղ արծակեր էր, երբ յանկարծ փողոցի դուռն ուժգին կերպով զարնուեցաւ :

Նարդիկ իր թմրութենէն ուշաբերելով նախ պատէն կախուած ժամացոյցին նայեցաւ . արդէն չը պիտի զարմանար եթէ կէս գիշեր եղած ըլլար, ա'յնքան խորունկը մոլորած էր իւր մտածումներուն : Բայց նկատելէ վերջ թէ իւր ամուսնոյն մեկնելէն ի վեր ժամ մը միայն անցած էր, խորհեցաւ թէ ան վերադարձած պէտք էր ըլլար ժառանգական ծանօթ խնդրոյն կարգադրութիւնն յետաձգող ու և է պատճառով մը, ուստի արտորնօք գնաց դուռը բանալու :



Սակայն որքան մեծ ու բուռն եղաւ զարմանքն ու շփոթութիւնը երբ դուռը բանալուն իր դէմ գտաւ ոչ թէ իւր ամուսինը, այլ զայն որու էութեան շուրջ կը դառնար իւր ամէնէն դառնահամ այլ նաև ամենէն առինքնող երազները :

Զարէն էր եկողը :

Իւր ձեռքը բռնած լապտերին լոյսը կը լուսաւորէր անոր զեղեցիկ առնադէմը, յուղմունքէն տժգունած, կորովամիտ աչքերը որոնք ազերսալից նայուածքով, կարծես արտօնութիւն կը խնդրէին ներս մտնելու համար, նաև բարձր ու թիկնեղ հասակը որ անստոյգ դիրքի մը մէջ կ'երևար :

Վերջապէս ան ճիգ մ'ընելով դէպի ներս քայլ մ'առաւ : Նարդիկ իր ամբողջ կորովը ոգեկոչելու պէտք ունեցաւ ըսելու համար սա խօսքը .

— Եթէ պարոնին հետ տեսնուիլ կ'ուզէիք՝ կը ցաւիմ, պարոն, որ պարապ տեղ մինչեւ հոս գալու ձանձրոյթն ունեցեր էք, որովհետեւ տունը չէ :

— Գիտեմ, պատասխանեց Զարեն՝ ծանր բայց յուզուած շեշտ մը դնելով իւր ձայնին մէջ . . . գիտեմ որ տունը չէ, վասն զի արդէն իմացած եմ թէ ժառանգական խնդիր մը կարգադրելու համար իւր աղգակամներէն մէկուն տունը պիտի երթար . մանաւանդ որ, տիկին, այս իսկ պատճառով այս օրն ընտրեցի հոս գալու համար :

Նարդիկ Զարէնին այս նշանակելի պատասխանը լսելով պահ մը շուարած մնաց, որովհետեւ անոր մէջ՝ իւր հրայրքոտ զգացումները գգուող տեսակ մը յայտնութիւն կար . արդարեւ Զարեն ուրիշ ի՞նչ բանի համար կրնար փութացած ըլլալ օգտուելու իւր ամուսնոյն բացակայութենէն, եթէ ոչ իրեն հետ մասնաւորապէս տեսնուելու համար . և ուրիշ ի՞նչ բանի համար կրնար իրեն հետ գաղտնաբար տեսնուիլ եթէ ոչ այն զգացումներուն վրայ որոնք զիրենք կը շահագրգռէին անշուշտ :

Արդ Նարդիկ կը գտնուէր այն տրամադրութեան տակ յորում գաղափարի և զգացումի ընդհարում մը տեղի կ'ունենայ :

Վերջապէս տկար ձայնով մը կմկմաց .

— Ինչո՞ւ եկաք ուրեմն :

Երիտասարդը պահ մը նկուն մնաց . բայց յետոյ ճակատը վեր առնելով , զօրաւոր արժանապատուութեան ձայնով մը բսաւ .

— Տիկին ձեր այդ հարցումը կարճ է և կտրուկ , բայց ինծի համար ընդարձակ իմաստ մը ունի այն և սանկ կը նշանակէ . « Կարեւոր պատճառ մը չեմ տեսներ ձեզի հետ դադարաբար տեսակցելու համար : Եւ պէտք է զխոնար որ ձեզի պէս մարդու մը հետ առանց բանաւոր պատճառի տեսնուիլ , աւելորդ ու նեղացողիչ ժամավաճառութիւն մըն է » , ըսէք , տիկին , ճիշդ այսպէս ըսել չէի՞ք ուզեր . . . մնաք բարով ուրեմն :

Ու քայլ մ'առաւ դուրս ելլելու համար :

Ամենէն զօրաւոր կիներն անզամ տկար կողմ մ'ունին , այն է մեղքնալ նուաստացած առնական խորխտութեան վրայ . Զարեհին այս խօսքերն ալ որ վիրաւորուած արժանապատուութեան մը հարազատ բողոքն էր , իւր անդիմադրելի ազդեցութիւնն ունեցաւ Նարդիկին վրայ , վասն զի սաստիկ այլայլած , անոր ճամբան գոցելով գոչեց .

— Բայց ինչո՞ւ կ'երթաք :

Ու զայն ներս քաշելով դուռը գոցեց :

Գոցե՛ց , բայց անմիջապէս տարուեցաւ խորհելու իւր յանդգնութեան վրայ , և սոսկաց , սակայն ալ ուշ էր . ուստի ստիպուեցաւ դողդոջ քայլերով Զարեհին հետեւիլ :

Վայրկեան մը վերջ իրարու մօտ նստած էին դողդողագին , հազիւ համարձակելով իրենց նայուածքը վեր առնելու :

Զարեհ ոչ այնքան շատ նրբացած երիտասարդ մըն էր , որքան ազնիւ իւր խառնուածքովը , իւր ծագումովը վերջապէս . իրաւ է թէ մինչեւ այն ատենները կիներու հրապոյրները ճաշակած էր անիկա իւր դժայարանքներուն ամբողջ բնատուր բնդունակութեամբը , բայց առանց անպատուութեան , և առանց մոլորելու այն շաւիղէն , զոր ողջմտօրէն իր ըմբռնած

բարոյական օրէնքը գծած էր իւր առջեւ. իբրեւ Պօլսեցի, իւր համարձակ և կիրթ վերաբերութիւնը որու՝ սովորութիւններու և կենցաղագիտութեան համար իր ունեցած ընտելացումով տիրացեր էր, նաեւ իր առնական վայելուչ դիմագիծը, բաւական էին զինք շահագրգռական ընծայելու մեծ կիներու և սիրելի հասարակ կիներու. եւ սակայն Չարէհ միշտ խղճամիտ կնասէր մը եղած էր, և արիական նկատումներով հրաժարած էր միշտ կնային այն վայելումներէն որոնք իւր խղճին դիւրագգածութիւնը վրդուկելու ո և է հանգամանքով կը ներկայանային իր առջեւ. այսպէս, օրինակի համար, կարգ մը փոքրոցի կնորաներու պէս չէր դեզերած երբէք այն կիներու շուրջը որոնք գեղեցկութեան համբաւ ունէին միայն առանց անոր վրայ բիծ մը ունենալու :

Եւ սակայն տարիէ մը ի վեր Չարէհ իւր կնասիրական բաղձանքներուն շրջանակն ալ շատ ամփոփեր էր, ինչպէս կը նկատէին իւր բարեկամները. վասն զի արդարեւ ասոնք կը նշմարէին թէ այն որ ամէն անգամ որ աշխարհիկ կնոջ մը վրայ խօսք բացուէր՝ ոգեւորութեամբ կը սողորուէր. — Չարէհ — հիմայ ճգնազգեացի մը ծանրախոտութեամբ կը գրաւուէր, և կարուկ ու պաղ ոճով մը կը կնքէր այն տաք յառաջարանը որ թերեւս ամենէն եռանդոտ խօսակցութիւններու գուռ պիտի բանար :

Ի՞նչ էր արդեօք այն գաղտնիքն որ հետզհետէ լուսկեաց մը, բարոյասէր մը կը դարձնէր Չարէհը :

— Սէրը, ճշմարիտ սէրը, վասն զի ի՞նչ բան քան զայն կրնայ կինն ու անոր պատիւը բարձրացնել, և սանձել մարդոց կիներու նկատմամբ ամէն պարագայի մէջ ցոյց տուած յախուռն ու անիմաստ վերաբերութիւնը. արդարեւ կրնանք ըսել, և այս խիստ թեթեւ վերապահութեամբ մը թէ, այն որ չէ զգացած հոգեկան այն փափուկ զգացումն որ սէր կը կոչուի, կը նմանի այն տղեկին որ յախճապակիէ անօթի մը հետ անտարբերութեամբ կը խաղայ և առանց ամենափոքր խղճահարութեան կը տեսնէ որ իւր ձեռքին դժպատեհ մէկ շարժումովը գետինն իյնալով փրչուած է անիկա :

Արդ Չարէ՛հ անդիմադրելի առիքնութեամբ մ'որ իւր բարոյական ըմբռնումներուն լիովին հակասական էր, կը սիրէր Նարդիկը, ամուսինն իր վաճառատիրոջ որու նկատմամբ ուրիշ ոչինչ պէտք էր մնուցանել եթէ ոչ յարգանք, երախտագիտութիւն և մանաւանդ բարեացակամութիւն :

Սակայն տեղն է կրկնելու թէ Չարէ՛հ գիտէր իւր պարտականութիւնները քննել ու զնահատել այն հայեցակէտէն ուսկից անոնք յատկօրէն կը դիտուէին իրենց ամբողջ նրբութեամբն ու մեծութեամբը, և եթէ բունն էր իւր սէրը, սաստիկ էր նաև իւր խղճահարութիւնը, զոր գէթ ամոքելու դիտումով որոշած էր ինքզինքն յարատեւ զոհողութեան մը սովորեցնել . այն է կարելի եղածին չափ խուսափիլ անկէ—Նարդիկէն—և կարելի եղածին չափ քիչ անգում անոր վրայ մտածել . բայց միթէ սէրը, ճշմարիտ սէրը կրնա՞յ երբէք հաստատուն պայմանի մը հպատակիլ, ոչ երբէք . Չարէ՛հ ալ ուրեմն երկար ատեն իւր բուն զգացումներուն ծովին մէջ երերազկալէ վերջ, հարկադրուած էր այլևս թողուլ ինքզինքն սր հոսանքին հետ քշուէր ուր որ ճակատագրուած էր մղուելու արդ նոյն օրը որ վաճառատունը պարոնէն իմացած էր թէ ծանօթ ժառանգական խնդրոյն վրայ հսկելու հրաւիրուած էր Պարոնը, որոշած էր երթալ Նարդիկին և յայտնել իւր սէրը :

Չարէ՛հ իւր այս որոշումին առաջին մասը կատարէր էր, ինչպէս որ տեսանք . . . :

Տակաւին Նարդիկին և Չարէ՛հին մէջտեղ կը տիրէր լռութիւն մը որ երկուքին ալ անկանոն, ու մերթ հաստատուն և մերթ կտրատ շնչառութեամբը կ'ընդհատուէր, երբ յանկարծ Չարէ՛հ ձայնով մ'որ որոտման մը պայթիւնին տպաւորութիւնը գործեց Նարդիկին վրայ, գոչեց .

—Այս տեսակցութեան նեղութիւնէն ձեզ խնայելու համար, Տիկին, տարիէ մը ի վեր գործադրեցի այն ամէն բուն միջոցներն որոնց կրնան հպատակիլ մարդկային կամքն ու կորովը . և այս միջոցին, բարէ՛, հոս ձեր առջև կը դանուիմ ամէն տեսակ վեհանձնութենէ մերկացած գերիի մը համակերպու-

թեամբ և այնքան անդիտակից կամքով որքան հովերէ քշուած տերեւ մը, որքան անդիմադրելի հոսանքէ մը մզուած տախտակի բեկոր մը կրնան ունենալ երբէք... ա՛հ, տիկին, կը սիրեմ ձեզ այն սիրով որու առջեւ կեանքը արժէք, մարդը կամք ու պատիւ ունենալէ, և մա՛ր տանջանք ըլլալէ կը դադրին. կը սիրեմ ձեզ, տիկին, այն ճշմարիտ սիրով որ մարդուս էութեան հետ կը նոյնանայ, հոգւոյն հետ կը նդխառնուի, այնպէս որ զայն մարդու մը էութենէն անջատելու համար պէտք է նախ անոր կեանքը բաճնալ. վերջապէս ձեզ կը սիրեմ, տիկին, ա՛հ ինչ որ պիտի ըսէի ձեզ, և ինչ որ իւրովի պիտի յեղեղեմ որչափ ատեն որ ունենամ շունչ մը որ կարենայ գէթ բաւ մ'արտասանել... :

«Հիմայ ձեր վճռին կը սպասեմ, տիկին, այն սրտադողով զոր կը կարծեմ միայն զգալ այն նշանաւոր օրն յորում՝ գերագոյն դատաւորին առջեւ կանգնած՝ պիտի սպասեմ թէ վայելքի՞ թէ տանջանքներու յախտենականութեան մը պիտի դատապարտուիմ... :

«Ա՛հ, տիկին, հաւատացէք ինծի, ինքզինքս այնքան աւսիրաւ կը զգամ վշտանալու կամ վիրաւորուելու, մանաւանդ որ տառապանքի չափն այնքան լեցուած է իմ մէջ որ ամենէն մեծագոյն նախատինքն անգամ ինծի համար նշանակութիւն չունի, այնպէս որ կրնաք աւանց ու և է խղճահարութեան վատ մ'անուանել զիս որ վերջապէս երախտագիտական նուիրական պարտաւորութեան մը դէմ ընդվզելու կը հարկադրուիմ... ներէ՛ ինձ, ո՛հ, կը սիրեմ քեզ... :

Զարէ՛ լուեց, իւր դէմքը շարաշուք շեղնութիւն մը պատեր էր, և աչքերը կը վառէին կրակով մը որ կը լուսաւորէր իւր ներքին յուզմունքը, կը հայլիացնէր իւր սիրոյն ամբողջ վեհութիւնը, վերջապէս կը պատկերացնէր այն ամէն տառապանքներն զորոնք կրէր էր անիկա մէկ տարուան միջոցին :

Գալով Նարդիկին, Զարէ՛ն ինքնուրուշխութեամբ լսելով իւր այլայլութիւնը չը մտածելու համար կիսազգեստին



18894-59

կոճակներուն հետ խաղացած էր շարունակ . իսկ երբ երիտա-  
սարգը «կը սիրեմ քեզ» ըսեր էր անօրինակ խանդով, անպա-  
տում մազնիսացումով մը համակուած գլուխը վեր առեր էր .  
որպէս թէ կեանքին մէջ առաջին անգամն ըլլար որ այդ մեղ-  
մանոյշ բառն իւր սրտին ալքերը շոյած ըլլար իւր ամենէն փափ-  
կազդեցիկ գգուանքով, մտիկ ըրած էր այդ բառն հոգեցունց  
հեշտութեամբ մը, և ամէն անգամ որ Զարէհ կրկներ էր այդ  
ամենակարճ բայց ամենազօր խօսքը, որպէս թէ լիաթօք ծծե-  
լու համար այդ խօսքին հնչումը կուրծքը ուսեր էր : Այլ այ-  
նուհետեւ իւր դէմքն այնպիսի բուռն արտայայտութիւն մա-  
ռած էր որ որոշապէս կը մասնէր թէ անոր զգացումներն յոր-  
դելու վրայ էին, և գուշակել կուտար թէ տարիէ մը ի վեր  
իւր սրտին մէջ համախոռնուած բայց ամէն կարելի ջանադրու-  
թեամբ զսպուած յուզմունքները ոչ թէ յայտնութիւն մը պիտի  
ունենային այլ գտութիւն մը :

Իբաւ ալ երբ Զարէհ իւր ըսելիքներն աւարտեց, Նար-  
դիկ անգիտակից տենդոսութեամբ մըն էր որ գոչեց .

— Քեզ վատ մ'անուանել, երբ այս անուշ լեզուով կը  
խօսիս ինձ դու որ մարդոց մէջ լաւագոյնն ես, Զարէհ, երբ  
վերջապէս սարսազդեցիկ խանդով մ'ինձի կուղղես բառ մը  
որ բառերու մէջ փափկագոյնն է . . . ա՛հ երբէք . այն ատեն  
պէտք է որ ե՛ս վատ մը համարուիմ, մինչդեռ թշուառ մըն  
եմ միայն . . . քեզի պէս . . . :

Եւ այս խօսքերն ըսելով որպէս թէ պրկուած ջիղերն  
ահագին բեռ մը թոթափելով թուլցած ըլլային, Նարդիկ անըզ-  
գայ ինկաւ բազմարանին վրայ, և պաղ քրտինքով մ'ողողուած  
հակառը բարձին կրթնցուց :

— Թշուա՛ռ մըն ես դու, և այն ինձի պէս, գոչեց երի-  
տասարդը . ըսել է դու ալ կը սիրէիր . . . բայց զո՞վ . . . ըսէ  
ինձ . . . զիս, այնպէս չէ՞ . . . ո՛հ, կը պաղատիմ քեզ, պատաս-  
խան տուր ինձ, Նարդիկ, եթէ ոչ պիտի խեղդուիմ . . . ա՛հ,  
Աստուա՛ծ իմ :

Նարդիկ վեր շտկուեցաւ . ուզեց պատասխանել, բայց

հեկեկանքն արգիլեց զինք . միայն խոշոր արցունք մը կախուեցաւ իր արտեւանունքէն :

— Ահ , ըսել է կը սիրէիր զիս , գոչեց այն ատեն Չարէհ խօլ անձկութեամբ մը—կը սիրէիր , և կը թողէիր որ երկուքըս ալ տառապինք մեռցնող անստուգութեան մը մէջ , մինչդեռ մէկ խօսքդ , մէկ բառդ , նոյն իսկ մէկ ակնարկդ բաւական էր մեր երջանկութիւնը շինելու :

Եւ երիտասարդն այս խօսքերն ըսելէ ետքն իր սիրավառ նայուածքով անոր աչքերուն խորունկը դիտելով՝ գրկեց զայն :

Նորատի կինը ցնցուեցաւ այդ նայուածքին կրակին առջեւ . . . զգաց որ իւր մէջքը Չարէհին տաք բազուկներովը կը պրկուէր , և թէ անոր գաղջ շունչը կը փայփայէր իւր քունքերը . այն ատեն իւր ջիղերն հեշտութեան մ'արագ հոսանքին սուժումով , կարծես թէ լուծուեցան , քայքայուեցան , և սրտին մէջ պարփակուած զգացումն յորդելով ողողեց իւր ուղեղն ալ . . . : Պահ մը միտքը դադրած էր թոււք մ'ըլլալէ այն տըրիփին դէմ զոր մինչեւ այդ ժամանակ զսպեր էր , այնպէս որ սահեցաւ քան թէ քարշուեցաւ երիտասարդին գրկին մէջ և զայն ուժգին կերպով սեղմեց իւր թիւերուն մէջ . . . :

Սենեակին խաղաղ լուծեան մէջ համբոյրի մը ծանր շշուկը լսուեցաւ :

Բայց յանկարծ Նարդիկ Չարէհի գրկէն վեր ցատկելով ետ ետ քաշուեցաւ սոսկումով , նայուածքն յառած պատկերին վրայ իւր ամուսնոյն որ կարծես շարժած , խօսած ու սպառննացած ըլլար իրեն . վերջապէս դառն ժպիտ՝ մ'ուղղելով Չարէհին՝ մատովը այդ կենդանագիրը ցոյց տուաւ անոր :

Չարէհ պահ մը շուարած աչքով հետեւեցաւ նորատի կնոջ ցուցամատին ուղղութեան , և չարաշուք քրքիչով մը բարձրածեղուն սենեակը թնդացնելով գոչեց .

— Ինձի կը ցուցնես ձերուկ ամուսինդ , ու՞ այս այնպիսի ատեն մը ուր երիտասարդութիւնը մեզ կը ժպտի իւր ամենէն հիանալի մէկ դրուագովը :

— Բայց իմ ամուսինս է ան, Չարէ՛ն, որու վրայ այնքան կ'արդահատիմ որքան քեզ կը սիրեմ. կը սիրեմ ըսի վերջապէս, կիմանա՞ս Չարէ՛ն, և պէտք է գիտնաս որ կոչս սիրով մըն է որ կը սիրեմ քեզ վասն զի կեանքիս մէջ առաջին անգամն է որ կը սիրեմ... բայց,— գոչեց Նարդիկ յանկարծ անոր առջեւ. ծըն-  
րադրելով և ազերսազին դիրք մ'առնելով — կը պաղատիմ քեզ, Չարէ՛ն, բաւականացիր ինձմէ սիրուելով միայն, ինչպէս ես ալ պիտի բաւականանամ քեզ սիրելով ընդ միշտ, քեզի համար մինչեւ մահս տառապելով, բաւականացիր, երբեմն ալ՝ եթէ կը հաճիս ինձի կրկնելով թէ տակաւին կը սիրես զիս :

Չարէ՛ն ոչինչ կը հասկնար այս խօսքերէն, ու անատոյզ ինքնամիտփութով մը իր ճակատը կը շփէր. վերջապէս խորունկ ձայնով մը որ հազիւ թէ լսուեցաւ, մըմտաց .

— Ի՛նչ կըսէ Նարդիկ, Աստուած իմ, արդեօք սխալ կը լսեմ :

— Ո՛չ, բարեկամս, սխալ չես լսեր, քենէ կը խնդրեմ գերմարդկային զո՛ողութիւն մը զոր կրնաս տանիլ դու որ այնքան ազնիւ սիրու մը կը կրես :

— Կը մտնա՞ս թէ արդէն ամբողջ տարի մը քեզի համար տառապելով ապրեցայ, և թէ ասկէ վերջը և ոչ իսկ օր մը տառապելու ոյժ ունիմ :

— Այլեւս չը պիտի տառապիս, Չարէ՛ն, քանի որ զիրար կը ճանչնանք. ես քեզ պիտի մխիթարեմ երբեմն յիշեցնելով թէ քեզ միշտ կը սիրեմ :

— Սակայն ինչո՞ւ այսպիսի անհեթեթ զո՛ողութիւն մը կը խնդրուի ինձմէ, գոչեց երիտասարդը զայրալիր շէշտ մ'աւել-  
ցընելով իր ձայնին :

— Վասն զի ան դժբա՛ղդ է :

— Ա՛ն, այսինքն ո՞վ :

— Նարդիկ չը պատասխանեց, միայն դողահար մասնե-  
րովը իր ամուսնոյն պատկերը ցոյց տուաւ երկրորդ անգամ  
ըլլալով :

— Դարձեալ ան, ամուսինդ, նորէն ցոյց կուտաս ինձի այն



մաշած խեղճ մարդը որ քեզ գգուանքներու մէջ քնացնելու և երջանիկ քուսդ սիրոյ բառերով օրրելու տեղ, կամ իր հաշիւներուն ցամաք առողանութեամբը մաղձդ կ'ուռեցնէ, ուղեղդ կը թմբեցնէ, և կամ իրիկունն յոգնած իր չոր կմախքը կուգայ նետելու քու գիրկդ, որ քեզի հետ ամուսնացած է միայն իր ծերութիւնը խնամող մ'ունենալու համար, քան երջանիկ ընելու քեզ որ նախասահմանուած ես սիրուելու, որ վերջապէս իւր մահաբոյր շնչովն ու ժպիտով կը սառեցնէ քու ժպիտներդ ու համբոյրներդ չրթունքիդ վրայ... ո՛հ, խնդրեմ, նարդիկ, թո՛ղ ալ այդ անխորհուրդ նազանքը. եթէ ոչ պիտի սկսիմ հաւատալու թէ անզգայ կին մըն ևս գուն:

Նարդիկ Զարէ՛հի այս խօսքերուն առջեւ վհատած ըլլալ կը թուէր: Բայց յանկարծ վեր առաւ իւր դէմքն որ տարտամ յոյտով մը լուսաւորուած կերեւէր, և բռնելով ձեռքէն Զարէհին որ համեստ մտամոլորի մը հլութեամբ իրեն հետեւեցաւ, տարաւ զայն խաշելութեան պատկերին առջեւ, և ըսաւ թախանձագին շեշտով մը.

— Խաշեալ Յիսուսի սիրոյն որ գերագոյն տառապանքի օրինակը տուաւ մեզի, բարի եղիր Զարէ՛հ, և ինձ խօսք տուր որ իրը ճշմարիտ մտերիմ զիս մտիկ պիտի ընես, ևս ալ պիտի ըսեմ քեզ թէ ի՞նչ է այն դաղանիքն որ թէ՛ քեզ և թէ՛ զիս կը ստիպէ ընելու այն անբերելի դո՛ղութիւնը:

Զարէ՛հին աչքերուն մէջ հաղիւ թէ փայլեցաւ հետաքրքրութեան նշոյլ մը որ շատ տկար էր և շուտ մ'ալ մարեցաւ. անկէց ետքը իր նայուածքը այնպիսի արտայայտութիւն մ'ունեցաւ որ սանկ կը թարգմանուէր. «Այս միջոցիս այդ դաղանիքը զիս չի շահագրգռեր կրթէք»:

Նարդիկ երիտասարդին անտարբերութիւնը նշմարելով իր չրթունքը խածաւ, վերջապէս աւելի տխուր ձայնով մը աւելցուց.

— Ինչո՞ւ չես խօսիր, Զարէ՛հ, չե՞ս ուղեր կէս ժամ զիս մտիկ ընել իրը մտերիմ մը որու առջեւ վշտեր կը պարզուին: Զարէ՛հ շփացած տղու մ'անհոգութեամբ ուսերը ցնցելով ըսաւ.

— Ուրիշ անգամ ամենայն եռանդով մտիկ կընեմ քեզ, ու երկար ժամանակ, բայց հիմայ . . .

— Հիմայ երբ կազերսեմ քեզ, արտասոււազին՝ ես որ սրտանց կը սիրեմ քեզ ընդմիջեց Նարդիկ իւր ամենէն փափկահնչուն ձայնովը :

Ձարէն այս անգամ նկուն մնալով .

— Կը խոստանամ մտիկ ընել այլ եւս, կակազեց ու հառաչեց :

Նարդիկ մեծ շունչ մ'առաւ, կարծես ազատութեան փունքին վրայ առնուած շունչ մըն էր ան. ու երախտազիտական սրտազեղութեամբ Ձարէնին նայելով .

— Հիմայ եկո՛ւր տեղը նստէ՛ որ մտիկ ընես, յարեց աշխուժութեամբ :

Ձարէնէն վերջը Նարդիկ ևս նստաւ բազմարանին վրայ և սապէս սկսաւ .

«Ո՛հ, Ձարէն, այն դադանիքը զոր քեզ պիտի պարզեմ, կամ պարզելու հարկին տակ կը գտնուիմ, մէկ լեզի պատառն է կեանքիս. ներէ ինձի, եթէ դայն քեզ հրամցնելու կը ստիպուիմ այնպիսի ատեն մը ուր ախորժակը կը պակսի քեզի. պէտք է որ աւելցնեմ նաեւ թէ այդ դադանիքը տակաւին ոչ մէկ մարդկային էակի պարզելու քաջութիւնը և փափաքն ունեցած եմ, ոչ իսկ մօրս, միայն Աստուած գիտէ, մէյ մ'ալ դու պիտի իմանաս հիմայ : Այո՛, պարոն, և ոչ իսկ մօրս յայտնեցի դայն, այնպէս որ խեղճ կինը մեռաւ իմ երջանկութեանս վրայ բացարձակապէս դո՛հ և ուրախ սրտով . . . :

«Դիտես թէ մօտաւորապէս երկու տարի կայ որ, — շարունակեց Նարդիկ փոքր դադարէ մը ետքը — ամուսինս զիս կնութեան կը խնդրէր : Թէեւ հէզ մայրս ամենակնճառող զոհողութիւններու գնով զիս խնամեալ կրթութեամբ մ'օժտելու աշխատեր էր, բայց ի՞նչ օգուտ որ զբամն է միայն նախանձեղի ամուսնութիւններու դապանակը. ուստի կը խոստովանիմ թէ առաջին դիմումն էր որ կըլլար ինձ համար, թէեւ տարիքը քսանեւհինգն անցած էր :

«Այս դիմումին վրայ խորհրդածելու համար երկու օր միջոց ուզեցի. շատ էր այս միջոցը, զոր խնդրեր էի միայն պայմանադրական ձեւակերպութիւն մը յարգած ըլլալու համար, որովհետեւ նոյն օրը, մինչեւ իսկ նոյն ժամուէն արդէն ըրեր էի որոշումս—ընդունիլ այդ առաջարկը: Ռ՛հ, Զարէ՛ն, չէի համարձակած այն ատեն վստահ ըլլալու թէ կրնայի աւելի բարեպատե՛հ ամուսնութեան մը նախասահմանուած ըլլալ, և թէ օրին մէկը կրնար մեր դուռն ափ առնել աւելի թարմ տարիքով և առողջ կազմութեամբ օտուած ուրիշ թեկնածու մը, անշահախնդիր ու ազատախո՛հ միանգամայն, որու վիճակն ու առանին պայմանները թոյլատրէին մայրս ալ մեր քով պահելու: Քանի որ չէի կրնար երբէք զայն լքել:

«Որոշեալ օրն ուրեմն հաստատական պատասխան զըրկուեցաւ պարոնին:

«Պէտք է որ քեզ յայտնեմ նաեւ թէ այն ատենները վրստահ էի որ պիտի սիրէի զայն, ամուսինս, վասն զի, Զարէ՛ն, ինչպէս դու ալ կրնաս վկայել կարծեմ, հէզ ամուսինս այն ատենն չունէր այն խարխուլ երեւոյթն որով կը ճանչցուի ինքն հիմայ. արդարեւ հակառակ իւր յիսունեօթ տարու հասակին, բարձրագլուխ դէմք մ'ունէր որ հասուն գեղեցկութեամբ մը կ'արտափայլէր, լեցուն հուժկու պարանոց մը, վերջապէս թիկնեզ ու կանգուն հասակ մ'ունէր որոնք առողջ կազմութիւն մը կը յառաջադրէին, և զորոնք կարծեմ հիացմունքով կը դիտէին նոյն իսկ երիտասարդներ...»

—Այո՛, այնպէս որ ասոնք կը փափաքին ամուսնոյդ պէս ծեր ըլլալ հիմայ այսքան հիանալի գոյներով նկարագրուելու համար քեզմէ, մրմուաց Զարէ՛ն միամիտ յիսորտանքով մը մատնելով այն դառնութիւնը որ իր սիրտը կ'ծած էր:

Նարդիկ այնպէս ձեւացնելով թէ չէր զգացած իւր առթած նախանձի վիրաւորանքը, շարունակեց.

«Որքան երջանիկ էի նշանուած օրերուս, որոնք բարէ՛, շատ շուտ անցան: Երանութեան այդ կարճ շրջանի միջոցին երեւակայութիւնը ծաղկալից ուղիներէ և արտակարգօրէն

զգլխիչ բոյրերու մէջէն զիս կ'առաջնորդէր, և ես մտովին կը սուզէի երջանիկ երազներուն մէջ այն հեռագատկերին ուր ամուսնացու աղջիկներ վստահարար կը յուսան վայելել ամենէն զուար կեանքի հաճոյքներուն, ամենէն սուրբը վերացումներուն, իբր միայն ամուսնացու աղջիկ մը, ոչ աւելի պահանջկոտութեան մը տրամադիր, այնքան եռանդով որքան կրնայ ներշնչել ապագայի մը շուրջ տածուած յոյս մը, միտքս պատրաստեցի բարեբաղդ ահուսին մ'ըլլալու հրճուանքին, և կ'երեւակայէի ընտանեկան դրախտ մը, գուրգուրանքի բոյն մ'ուր ամէն ինչ պիտի ժպտէր ինձի, արդէն ամուսինս իւր նախկին կնոջմէն քանի մը զաւակներ ունեցած էր, թէև ամէնքն ալ հեազհեաէ հոգին յանձներ էր ուստի արդելք մը չիկար ինքզինքս արդէն նկատելու նաեւ մայր մը, և մտքիսմէջ յատակագիծներ կը շինէի ու կը քանդէի զաւակներս հազուեցնելու, զանոնք քաղցնելու, քնացնելու, անոնց լեզու տալու, վերջապէս զանոնք դատարարակելու համար:

Ախո՛ս, երեւակայական այդ դունադեղ շէնքն իւր ամբողջ ծաղկահիւս գրուագներով փլած դտայ ամուսնութեանս հետեւեալ առտուն, ինքզինքս զանելով յուսախարութեան մը ստորնակէտն որ այնքան խորունկ էր, որքան վստահութեանս վերնակէտը՝ բարձր...:

Նարդիկ այս խօսքերն ըսելէ ևտքը թողուց որ իւր լըճացած աչքերն յորդին:

— Կաղաչեմ, մխիթարուէ Նարդիկ, վասն զի ա՛նա քու մօտդ կը գտնուիմ ես որ քեզ այնքան կը սիրեմ, և որ հոգի կուտամ յուսախարութիւններուդ մէջ վշտակցելու քեզ... բայց չեմ հասկնար թէ ի՛նչ պատճառաւ ինքզինքդ դժբաղդ գտեր էիր ամուսնութեանդ հետեւեալ օրը:

— Պատճառն այն էր, Զարէ՛հ, որ այն օրը չէի վայելած այն սրտապարար գիրկնդխանումն որ ամենէն խորունկը թաղուած զգացումները թունդ կը հանէ, և շրթունքներու վրայ կը բերէ, կը դնէ բառեր որոնց հնչում մը սահմանելը վեր է մարդկային կարողութենէն, բառեր որոնք սիրաբորբոք սրտի մը թագուն թելերէն կը թռչին... և ոչ միայն այն օրը:

մինչև նոյն իսկ այսօր, կը լսե՞ս, Զարէ՛, մինչև այսօր խեղճ ամուսինս չի կրցաւ, վասն զի չի համարձակեցաւ ինձի նայիլ այն անդիմադրելի նայուածքով որ կը դադրեցնէ ուղեղն իւր կանոնաւոր գործունէութենէն, կը թմրեցնէ ջիղերը, և մարդուն կարծել կուտայ ապրիլ ոչ թէ անցաւոր աշխարհի մը կեանքը, այլ այն զոր ամէն ողջամիտ անհատ առանձնայատուկ հայեցակէտէ մը նկատելով կը բաղձայ ապրիլ յաւիտենականութեան մէջ... որովհետեւ, Զարէ՛, կը քի յորդ խուժումին առջև խորտակուած էր ամուսինիս սեռական կորովը, և այս անդարձօրէն :

Զարէ՛ ցնցուեցաւ, նսեւ զզայց սաղընսուելն իր մազերուն, գրեթէ մեքենայաբար ու մեղմիւ կրկնելէ ետքը նարդիկին վերջին խօսքը, գոչեց .

— Այսինքն ըսել կուզես թէ...

Ու կարմրելով լռութիւն պահեց :

— Ես ըսեմ անա այն խօսքը զոր դուն կը շիկնիս իմ տուջևս կրկնելու, Զարէ՛, տակաւին էրիկ մարդ չեմ ձանչցած, այնպէս որ մինչև այսօր կուսական աշխարհին մեջ կապրիմ :

Այս համարձակախօսութիւնն հակառակ իր բանական տղեղ մերկութեան այնքան արտառուչ էր սակայն, և այդ խօսքն արտաբերած ատեն նարդիկի գէմքն այնպիսի վնճութիւն մ'առած էր որ ոչ թէ միայն արատ մը չէր դներ անոր ազնուութեան վրայ, այլ նոյն իսկ գուցէ աւելի կը վսեմացընէր զայն...

Անոր այդ խօսքին վրայ պահ մը չարաշուք լռութիւն տիրեց սենեակին մէջ :

Զարէ՛ նստած տեղն այլ և այլ դիրքեր կը փոխէր, և այս այնպիսի անհանգիստ շարժումներով, որոնք անոր բուսն յուզմունքը կը մասնէին :

Յանկարծ գրեթէ զայրալիւր շեշտով մը գոչեց .

— Սակայն ինչ անուն տալու է, չեմ գիտեր, այն արտակարգ համակերպութեան զոր կամայ կրած ես մինչև հիմայ, և այն անտանելի, գերմարդկային գոհաբերութեան որու

ենթարկած ես փափուկ էութիւնդ... խաչոր, Նարդիկ, այսպիսի զոհողութիւն մ'որակելու համար ուրիշ բառ չեմ յիշեր այս պահուս եթէ ոչ «խենդութիւն» բառը :

Եւ նշմարելով Նարդիկին մէկ ցաւազին շարժումն, իւր խօսքին դառնութիւնն ամօքելու համար աւելցուց .

— Վսեմ խենդութիւն մը, այո՛, Նարդիկ... ինչ որ ալ ըլլայ սակայն, ազնուութեան այս աստիճանը ես չեմ կրնար կոր ըմբռնել, այնպէս որ համարձակութեամբ պիտի ըսեմ թէ դու կա՛մ մարդկային էակէ գերադաս սրարած մ'ես կամ ընդհակառակն ստորադաս մէկը... :

«Խնդրեմ, ըսէ ինձի, ի՞նչ անպատեհութիւն կար լուծել տալու մէջ այս ամուսնութիւնը որ անտանելի դժբաղդութեանց դուռ մը բացած է թէ՛ քու և թէ՛ ամուսնոյդ առջեւ . և միթէ այդ պարագային պիտի գտնուէ՞ր մէկը այնքան անխիղճ կամ տխմար որ համարձակէր պախարակելու կամ արգիլելու ամուսնալուծութիւն մ'որու բանաւորութիւնն սչ մէկ կերպով կարելի է վէճի տակ ձգել . նոյն իսկ ամուսինդ, որու համար ալ անուշտ այս կեանքն իւր վզին շուրջը բոլորուած ծանրալիւռ անուր մըն է, չէ՞ր բաղձար, կամ չը պիտի՞ հաւանէր այն բաղձալի կարգադրութեան որ երկուքդ ալ պիտի ազատէր ձեզ կոչկոճոզ կապանքներէ :

Յանկարծ Զարէն անօրինակ խանդով մ'ոտքի ցատկեց, և ձայնով մը որու մէջ աղերս, հառաչ, հեկեկանք, վեհանձնութիւն, վերջապէս ամէն սրտաշարժ արտայայտութիւն կար, գոչեց .

— Արեւուդ սիրո՛յն, եթէ կը սիրես կեանքը, Աստուծոյ սիրո՞յն, եթէ կը հաւատաս Անոր թող այն վսեմ յիմարութիւնները որոնք կը պատրեն քեզ քաշքշելու համար կեանք մը զոր ոչ մի մարդկային կորով կարող է տանելու, բառ մ'ըսէ ինձի միայն, բառ մը հաւանութեան, ու ամիս մը ետքը ամուսինը պիտի ըլլաս այն անձին որ քեզ կը պաշտէ, որ իւր ամենէն խորունկ զգացումները քեզ տուած, և որ, վստահ եղիր, ամենէն պատուաւոր միջոցներով քեզ պիտի ազատէ դժոխային կեանքէ մը... ա՛հ՝ ձեռքս... :

Երիտասարդին ձայնը վսեմ շեշտ մը ունէր, աննենդ շեշտ մը, որ Նարդիկին աչքը փայլատակել տուաւ. անոր նայուածքին մէջ ազնուութիւն, հաստատակամութիւն և անկեղծութիւն կը փայլէր, ուստի նորաստի կնոջ սիրաբ պահ մը անհուն տենչանքներու յորդուժովը ողողուեցաւ: Սակայն այն փայլը որով անոր աչքերը շողացեր էին, և այն տենչանքներն որոնք իւր սրտին մէջ եռացեր էին հետզհետէ մարեցան. այն ատեն— վայրկենական լուսթեանէ մը ետքը որ սպասումի ամենախոր անձկութեամբ դողացող Զարէհին՝ ժամանակին ծանօթ բաժանումներուն ամենէն երկարը թուեցաւ— սիրուն գլուխը վար խոնարհեցնելով վհատ շեշտով մը պատասխանեց.

— Բարէ, պարոն, հարկադրուած եմ մերժելու ձեր այդ վսեմ առաջարկը:

Երիտասարդը սոսկումով ետ ընկրկեց, և վհատօրէն անխմաստ յիշոց մ'արձակելէ ետքը ինկաւ բազմարանին վրայ և մրմոսաց.

— Ո՛հ կը սկսիմ հաւատալու թէ զիս կը խաբես ըսելով թէ զիս կը սիրես:

Նարդիկ նախ արտասուքով ու մեղադրանքով լի նայուածք մ'ուղղեց Զարէհին, և վայրկենական դադարէ մը ետքըն ալ յարեց.

— Զարէհ, մեծ է քու եռանդդ, փառաւոր՝ անձնուիրութիւնդ, և վսեմ՝ զո՛նղութիւնդ, բայց, յախուռն և մանաւանդ անգութ դատաստան մըն է որ կրնես բսելով թէ քեզ չեմ սիրեր: Զիս կ'ամբաստանես թէ քեզ կը խաբեմ բառերէն ամենէն մեղանոյ՞ը՝ չրթունքիս վրայ, այսինքն ըսել կուզես թէ Յուդայի նենդամտութիւն մը կուզեմ պարտկել համբոյրով մը. ա՛հ, Զարէհ, ինծի համար չիկայ ամբաստանութիւն մը այնքան ծանր որքան քու ըրածդ, անհիմն ամբաստանութիւն մը սակայն որու համար միայն քե՛զ կրնա՛մ ներել:

«Բի՛շ մ'առաջ ինծի կը հարցնէիր թէ ի՞նչ անպատեհութիւն կար մեր ամուսնութիւնը լուծելու մէջ. բայց դու ա՛ր ըսէ ինձ, երբ պատուաւոր մէկը, թող կին մ'ըլլայ այն, գիտէ:

կղւել իւր տուած խոստումը, և ամէն տարադէպ ու դժբաղդ պատահականութեանց առջեւ շքնկրկելու առաջադրութեամբ և ուխտով իւր կեանքն ու բաղդը սիրայօժար պատրաստակաւ նութեամբ մը կընդխառնէ ուրիշի մը կեանքին ու բաղդին հետ երբ անակնկալ փորձանքներու խառնարանն եղող այս աշխարհին ազէտներուն դէմ իբրև վաճան, զօրեղ նկարագիր ու տոկուն սիրտ գտնելու ու ընծայելու փոխադարձ իրաւունքով ու պարտականութեամբ երկու կեանքեր իրարու մէջ կը ձուլուին, ներելի է որ պատուաւոր անձ մը առաջին ցաւալի պատահութեան մ'առջեւ ուժաթափի, ընդլզի, կրճէ զինքն ուրիշի մը կապող հանգոյցը, և լզէ իւր պարտաթուղթը: Պիտի սուարկես թերեւս ինձ թէ, եկեղեցական օրէնքն անգամ արածադրուած է զզջումի ընկրկում մ'ընելու՝ ամուսնալուծութիւն թոյլատրելով քանի մ'որոշ ու բանաւոր պարագաներու մէջ, ինչպիսիներէն է մեր ամուսնախան կեանքը. բայց ես ալ կը պատասխանեմ: Այո՛, եկեղեցական օրէնքը թոյլատրած է այսպիսի դժբաղդ պարագաներու մէջ ամուսնալուծութիւն պահանջել՝ բայց չէ հրամայած. զբրկեալին առջեւ բաց դուռ մը թողած է, բայց չի բռնադատեր անպատճառ անկէջ դուրս ելլելու: Եւ կը հարցնեմ քեզ դարձեալ, ո՞ր օրէնքը կրնայ ու կը համարձակի դատապարտելու ինքնակա՛մ զոհողութիւն մը որ մարդու մը կեանքն ու պատիւը և ընտանիքի մը ախուր գաղտնիքն ասպնովագրելու համար տեղի կունենայ, եթէ ոչ սատանայի օրէնքը...

«Ինձի կը հարցնէիր նաև թէ նոյն իսկ ամուսինս չը պիտի հաւանէր ամուսնալուծութեան: Քու այս հարցումն ընելդ կը նշանակէ որ դու տակաւին պարոնին նկարագիրը չես ուսումնասիրած լիովին. որպէս զի հասկնաս թէ ինչ բան կուզեմ քեզ, լաւ է որ պատմեմ նաև քեզ խօսակցութիւն մը որ ամուսնութենէս ամիս մը վերջ տեղի ունեցաւ իմ և ամուսնոյս միջեւ:

«Իր կոչին վրայ երբ իւր մասնասենեակը մտայ՝ գտայ զինք թաղուած չարագուշակ տրտմութեան մը մէջ. հրաւիրեց



որ նստիմ իւր մօտ. նստայ. այն ատեն ըսաւ ինձ Խորազդեցիկ ձայնով մը .

— «Նարդիկ, ահա ամբոս մըն է որ եկեղեցական օրէնքի «մը վճիռով զիրար ամուսին կանուանենք. բայց ափսո՛ս, բընու թիւնը ձայնով մը որ աւելի զօրաւոր է զէթ այս անգամ, «կը բողոքէ այդ վճիռին դէմ և անոր սրբազրութիւնը կը «պահանջէ : Երջանկութեանն համար կեանքի մը որ իւր վախճանին մօտեցած է, որու ճրագին իւզն հատնելու վրայ է, «չարժեք խորհիլ և մտատանջ ըլլալ, բայց ընդհակառակն նուիրական է այն կեանքն որ յոյսերու մէջ ուռճանալու, երազներու մէջ ծաղկելու, և երջանկութեան մէջ հասունալու «տրամադրութեան մէջ է : Արդ, բնութիւնն այսօր զիս կամ «բաստանէ իրրեւ թունաւորիչ նորատի կեանքի մը, և շատ «տրդարացիօրէն. այս ամբաստանութեան ծանրութեան ներքեւ, գործած ահաւոր սխալիս խղճահարութեամբն այնքան «տառապեցայ, Նարդիկ, որ կզգամ թէ այլ եւս անկարելի է «ինձ կրել այս ծանրակիր կեանքը . ուստի, վերջնականապէս «որոշեցի—չարունակեց յանկարծ Եթուհեղով չարագուշակ «կերպով մը որ, չէի գիտեր ինչո՞ւ, սարսուռ սլատճառեց «ինձի—այո՛, վերջնականապէս որոշեցի վաղն իսկ գրաւորապէս «գիմել Սրբազան Հայրապետին և մեր դժբաղդ ամուսնութեան լուծումը թախանձել. այս կերպով միայն կը յուսամ դարմանել այն դժնդակ զրկումը որ քեզ պատճառեցի «անխորհրդարար : Եւ հիմայ, ինդրեմ, Նարդիկ, ներէ ինձի, «ու եթէ կարելի է զիս մինակ թող այլ ևս» :

«Չարէ՛հ, խեղճ մարդն իւր այս որոշումն ինձ յայանելու ատեն կը ջանար ինձ ցոյց տալ անխառովութիւն մը որ սակայն, միշտ չէի հասկնար, ինչո՞ւ, զիս կը վախցնէր աւելի քան ամենամեծ այլայլութիւն մը : Բայց ահա ինչ որ պատասխանեցի իր այդ խօսքերուն :

«Պարո՛ն, ներեցէք ինձ որ մի անգամ ընդմիշտ յայտնեմ ձեզ թէ այդ տեսակ գաղափար մը ամենամեծ նախատինքն է ինձի համար որ ամէն անակնկալ դժբաղտութեանց դիմադրա-

ւելլու, եւ ամուսինս հարուածող ամէն տեսակ վշտերու մէջ  
անոր բախդակից ըլլալու կորովն ու յօժարամտութիւնը չը  
պակսիր իմ մէջ երբէք: Կրօնէք թէ բնութիւնը կը հերքէ մեր  
ամուսնութիւնը, բայց ըսէք ինձ, միթէ անիկայ կրնայ արգելք  
ալ հանդիսանալ որ միեւնոյն յարկին ներքեւ չի բնակինք ես ու  
դուք: Ասկից զատ, պարոն, միթէ դուք այնքան անգո՞ւթ  
պիտի ըլլաք որ տարածամ մահուամբ մը մեռցնէք իմ մայրս  
որու բացարձակ վստահութիւն ներշնչած եմ իմ երջանկու-  
թեանս նկատմամբ: Գալով ձեր խղճահարութեան, բոլորովին  
անիմաստ կը գտնեմ զայն, որովհետեւ ինձի համար երջանկու-  
թիւնը ձեր հանգիստն է, և կեանքը ձեր պատիւը, եւ չիկայ աւե-  
լի մեծ դժբաղտութիւն եթէ ոչ նկատել թէ ամուսնալուծութեան  
մը հռչակումով ձեր պատիւը իբր ծամոց կարգ մը դատարկա-  
պորտ մարդոց բերանը կը պատի: Իսկ եթէ պարոն, ըսի իրեն  
մեղադրակից նայուածքով մը, զիս ու իմ մայրս կը համարիք  
այլեւս անօգուտ արարարածներ որոնք կուտեն, կը խմեն ու  
կը հագուին միայն ի վնաս ձեր: Եւ որոնք իբր աւելորդ բեռեր  
ձեր անդորրութիւնն ու հանգիստը կը վրդովեն, ո՞հ, այն ատեն  
ինդիրը կը տարբերի. այն ատեն դուք իրաւունք ունիք գոր-  
ծադրելու ձեր խորհուրդը, եւ մենք պարտաւորուած կըլլանք  
համակերպելու այն տխուր ձակատաղրին որ պիտի բացուի իմ  
ու հիւանդոտ մօրս առջեւ՝ այսուհետեւ »

« Հազիւ թէ այս խօսքերն աւարտեցի, հէք մարդը վիզս  
պլլուեցաւ, եւ ինձ զարհուրանք պատճառելու չափ արտասուեց,  
իւր արտասուած միջոցին ամենէն գուրգուրակից բառերն հեծելով:

« Մէյմ՝ ալ յանկարծ ինքզինքն ամփոփելով վազեց իւր  
մասնաւոր պահարանին առջեւ, ջղացիկ ձեռքով բացաւ զայն,  
և մէջէն սրուակ մ'առնելով սենեակէն քարայտտակը նետեց:  
Սրուակը բնականաբար կտոր կտոր եղաւ, բայց սոսկումով  
նշմարեցի որ միջին հեղուկ մը հոսած և սալաքարի մը ակօսնե-  
րէն մէկուն մէջ լծացած էր, այն ատեն ամէն բան հասկցայ.  
Ո՞հ, հէզ մարդը որոշած էր անշուշտ իմ կողմէս իւր կեղծ  
առաջադրութեան համար ցոյց արուելիք ամենազոյզն հաւա-

նութեան մը պարագային՝ անձնասպան ըլլալ, այսինքն իւր պատիւը պատուաւոր մահուամբ մը կնքել, և ոչ թէ ինչպէս կուզէր զիս վտահեցնել, ի լուր աշխարհի հռչակուած ամուսնալուծութեան մը նախատինքը դրօշմել իւր անուան վրայ :

« Զգացած սարսափէս հազիւ ուշաբերելու վրայ էի երբ ամուսինս գոչեց .

« Այն օրերը զորոնք այսուհետեւ պիտի ապրիմ, քեզի պարտական եմ, Նարդիկ, և քեզի երախտապարտ եմ այնքան որքան կրնայ ըլլալ պատուաւոր մարդ մը : Ո՛հ, բնութիւնն այսօր կը քակէ այն հանգոյցը զոր եկեղեցական օրէնքը կապած էր, այնպէս որ, ախո՛ս, այլ եւս չը պիտի կրնամ քեզ ըսել թէ քու ամուսինդ եմ, բայց ոչինչ պիտի արդիլէ զիս որ քեզ համար հայր մը չըլլամ, և հօր մ'աղապատանքով չը գուրգուրամ քու վրադ, որ պատուոյս պահապան հրեշտակն ես :

« Ահա այս է զլիսաւոր գիծն այս խօսակցութեան որով հէզ ամուսինս իւր խղճահարութեան դառնութիւնն իւր ամենէն շօշափելի ապացոյցով երեւան կը բերէր : Արդէն անձնուրացութեան գաղափարով տողորուած արարած մըն էք, նկարագիր մը որ գուցէ նկատուի դժբաղդութեան սովորած արարածի յատուկ տեսակ մը ազնիւ տկարութիւն որով մարդ դժբաղտագոյնը միսիթարելու մէջ կը գտնէ իւր ամենամեծ սիրտիանքը . միւս կողմէ գերայուղուած այն արժանապատուութեան առջեւ զոր ամուսինս նախայայտնած էր, վարկաբեկութեան մէջ ապրելու միսիթարութիւնն ունենալէ աւելի իւր կեանքը, պատուաւոր մահուամբ մը խզելու դիտաւորութիւնը պարզելով ինձ, սրտիս մէջ անոր նկատմամբ տածուած արդարատանքն անհամեմատ թափ մը ստացաւ :

Այս արգահատանդն աւելի արմատացաւ տարաբաղտ մօրս մահուրնէ ետքը մանաւանդ, յորում ինքզինքս աշխարհի վրայ մինակ դառն էի դժբաղտութեան ընկերիս հետ . սակայն, որպէս թէ բնութիւնը ուզեր փորձել այս զգացումը, կամ դաւաճանել անոր, այս միջոցներուն սրտիս մէջ ծայր տուած էր յուրիչ զգացում մ'ալ, Սէրն էր անիկա, քու սէրդ, Զարեհ, որ հետզհետէ

աճեցաւ, արմատացաւ մինչեւ որ օր մը վերջապէս ծառացած ու ճակատած գտնուեցայ այն զգացումին դէմ որով իմ ամուսնոյս հետ վշտակցելու գոհունակութիւնը գէթ ինծի կը մնար. ո՛հ, այն ատեն եւ մինչեւ այսօր այդ երկու զօրաւոր զգացումներուն խուլ, անդադրում ընդհարումները սկսան ու շարունակուեցան առանց զիրար կարենալ յաղթահարելու, որովհետեւ կռիւն ու իւրաքանչիւրին ոյժն հաւասար էր: Իսկ ես, այդ երկու հակընդդէմ զգացումներու ոյժերուն մէջ տարուբեր, երկուքին ալ կը հպատակէի հաւասար համակերպութեամբ, հաւասար յօժարութեամբ, այնպէս որ քեզ կը սիրէի սէրերու ամենէն մաքուրովը, իսկ ամուսնոյս վրայ կը կարեկցէի գութի ամբողջ հոգեբանութեամբը:

Ո՛հ, Զարեհ, ինչպէս նկարագրեմ քեզ այն դժնդակ կացութիւնը սրու ենթարկուեր էի մինչեւ այսօր. ի՞նչպէս պատկերայնեմ քեզ այն պատեռագո՛րի դաշտը ուր այդ երկու զգացումներուն կռիւք տեղի կուսննար:

Մէկ կողմէ հէգ ամուսինս կը նկատէի տարաբաղդութեան գերագոյն տիպար մը, իսկ ինքզինքս միայն զայն մխիթարելունախասահմանուած էակ մը որու արգահատանքը զերծ ըլլար ամէն արատէ, ամէն նկատումէ. ուստի իրեն նուիրուած էի գութի ամբողջ խառնուածքովս. մանաւանդ որ անոր վարմունքին, նայուածքին ու գործերուն մէջ նշմարելով հայրական սրտի մը փափկութիւնն ու խանդազատանքը և մանաւանդ բացարձակ վստահութիւնն ինծի նկատմամբ, արդէն ամուսնական բնագոյումը տեղի տուած էր իմ մէջ ուրիշ զգացումի մը, որդիական զգացումն էր ան, որով ինծի համար աւելի հեշտ կուգար՝ ամուսնալուծութեան խրտուիլակին առջեւ դողահար՝ անոր թոյնի բաժակը պարպելը տեսնել, քան ու է չափով անոր հայրական վստահութիւնն ու սէրը չարաչար գործածել. որովհետեւ, ո՛հ, կին մը դիւրաւ կրնայ ու կը համարձակի խաբել իւր ամուսինը, բայց ոչ իւր հայրը:

Եւ սակայն, միւս կողմէ, սարսափով կը մտածէի թէ օր մը վերջապէս սէրը կրնար անպատնիշելի յորդում մը ունենալ,

և զիս մղել բռնաբարելու այն սահմանը որ քաշուած էր ընտանեկան պարտաւորութեանս ըմբռնումին եղերքը :

Ի՞նչ պիտի ըլլար այս դայթումին հետեւանքը :

Բարէ՛ , այնուհետ' և կեանքն ինծի համար պիտի ըլլար խղճահարութեան տագնապններով շղթայուած ժամանակամիջոց մը , յորում ամէն ինչ պիտի դատապաշտէր զիս վճիռներու ամենէն անողորմովը . իսկ աշխարհը բարոյական տանջանարան մը ուր ծաղիկն իւր բոյրին , արեւն իւր շողին , բնութիւնն իւր վայելչութեան , վերջապէս ամէն ինչ որ իւր վրայ բարութեան ու երջանկութեան դբօշմ' մը կը կրէ , իւր բանաստեղծութեան հրապոյրէն զիս պիտի զրկէին . և յանցանքիս խրտուիլակը միայն պիտի ցցուէր իմ առջեւս ամէն տեղ , ամէն առեւն ու ամէն բանի մէջ . . . :

Եւ ինչպէ՛ս պիտի համարձակէի այն ատեն ուղղակի նաշելու աչքերուն մէջ իմ ամուսնոյս որ ինծի համար իւր զգացած խղճահարութեան դառնութեամբը հիւժեղով՝ քսան ամուսնու մէջ ծերացած էր այնչափ որչափ չը պիտի ծերանար գուցէ եթէ քսան երջանիկ տարիներ ապրէր . որ զգալի յառաջդիմութեամբ մը դէպի գերեզման կը դիմէր զիս օր առաջ ամուսնական կապանքէն արձակելու հաստատ առաջադրութեամբն ու փութկոտութեամբը՝ կարծես . ինչպէ՛ս պիտի համարձակէի իրեն արտասանել գորովանքի և մխիթարութեան բառեր , և զգալ այն սրտագեղ գոհունակութիւնը զոր մինչեւ այսօր զգացեր էի անոր ստաւ շրթունքներուն մօտ ժպիտ մը գոյացնելու , և անոր մեռած սրտին ալ գորովանքի բառեր ներշնչելու յաջողելով :

«Ա՛հ , հաւատա՛ , Զարեհ , այնպէս կը կարծէի թէ այն ատեն անոր նկատմամբ տաճած գութի զգացումն , որ հետզհետական աճումով վերջապէս պաշտամունքներու ամենէն վեմեր , կրօնքներու ամենէն նուիրականը դարձած էր ինծի համար , աստուածային անէծքի մ'արձագանգն ըլլալով պիտի դատապարտէր զիս , իւր ռաստին ներքեւ պիտի փշրէր սրտիս այն մասը որ քեզի համար կը տրոփէ , և վերջապէս ինձ ցոյց պիտի

տար այն մահատարուս վիրապն որ վատանուններու ընդու-  
նարանն է, և անոնց բարոյական սպանդանոցը . . . :

Նարդիկ հոս պահ մը լուեց, և ջղաձգութենէ գալարեող  
մարդու մը տաղնապով կուս հառաչ մ'ալ արձակելով աւել-  
ցուց սա խօսքերն ալ :

«Ահաւասիկ, Չարեհ, այն կեանքն որ կ'ապրիմ մօտուս-  
բապէս երկու տարիէ ի վեր, գերագոյն տանջանքի կեանք  
մը, այնպէս չէ՞ . . . Եւ սակայն սա վայրկեանիս ինքզինքս թե-  
թեւցած կըզգամ եթէ ոչ բոլորովին գէթ մեծ մասով, որովհե-  
տեւ վշտերուս խուրձն ամենակեղծ մտերմի մ'առջև թօթա-  
փած ըլլալու սրտազեղ գոհունակութիւնն ունիմ :

«Մանաւանդ թէ հիմայ լիովին կրնաս հասկնալ թէ այ-  
սուհետեւ միակ երջանկութիւն մ'ունիմ, այն է՝ ամենէն անմեղ  
հոգեկան պաշտումով մը քեզ սիրել միշտ, ու մտածել թէ կա-  
րելից նայուածքդ գէթ երբեմն պիտի խոնարհի իմ վրաս մի-  
թարութեան շողեր կաթեցնելու իմ սրտիս մէջ, բայց նաև ու-  
նիմ, Չարեհ, միակ իղձ մը, այն է՝ մինչև հանգրուանն յառա-  
ջանալ այն ճշմարիտ գոհողութեան մէջ որով միայն ասկէ վերջ  
մանաւանդ համակերպութիւնն ինձի համար տանելի պիտի ըլ-  
լայ, կեանքը դիւրատար, և քեզ սիրելով զգացած հոգեկան  
հեշտանքս ալ նուիրական ու մաքուր . Ո՛հ, այս ամէն բարիք-  
ներն ինձ պիտի երաշխաւորեն միայն քու կորովդ, քու բար-  
եացակամութիւնդ ինձի նկատմամբ, քու վսեմ գոհողութիւնդ  
վերջապէս, Չարեհ. ուստի, եթէ տակաւին ամենադոյզն ար-  
գահատանքի մը, ջնջին հանգարտութեան մը, խզճի ամենա-  
փոքր անդորրութեան մ'արժանի կը համարիս Նարդիկն որ  
հոգևոյն ու սրտովը միշտ քուկող է՞ մի՞ յիշեր, ու եթէ կա-  
րելի է մոռցիր սէրդ, ու բաւականացիր երբեմն յիշելով միայն  
թէ քեզ կը սիրեմ, թէ քու կարեկցութեանդ կարօտ եմ միշտ,  
և թէ վերջապէս քեզի համար հասնի՛լ, մոխիր ըլլալ գերա-  
գոյն երջանկութիւնն է ինձի համար :»

Հոս բոլորովին լուեց Նարդիկ :

Չարեհ ալ արդէն երկար ատենէ ի վեր լուս կը մնար :

Ոչ ոք կրնայ իրարու շղթայել գաղափարի ու զգացումի այն յորձանքներն որոնք պառուտքեր էին երխտասարդին մտքին մէջ Նարդիկի յայտնութեանց առջեւ : Միայն թէ երբ Նարդիկ լսեց , և Մարտիրոսի համակերպութեամբ Ջարեհին վճիռն ընդունելու համար սիրուն գլուխը վար ծռեց , սա՛ յանկարծ տաքի վրայ ելաւ ու իր ձեռքն անոր երկնցուց . և Նարդիկ իր գլուխը վեր առնելուն տեսաւ անոր աչքերուն թրջած ըլլալն արցունքներով որոնք գորովի ու արգահատանքի ամենէն պերճախօս արտայայտութիւնն ունէին :

Վերջապէս զսպուած հեկեկանքներու մէջէն սա խօսքերն յաջողեցաւ հեծեծել դժբաղտ սիրահարն իւր ամենադժբաղտ սիրուհիին .

— Նարդիկ , հրեշտակ մ'ես դուն , և աւելի քան սատանն վատ ու անարժան մէկը պէտք է որ ըլլամ ես , եթէ չը զոհեմ քեզ համար , քու հանգստիդ համար ինչ որ իմ երջանկութեանս կը վերաբերի . . . մնաս բարով , ամենահաւատարիմ մտերմի մը ձեռքը կը սեղմես , միայն այնպիսի մտերմի մը որու համար կեանքը քու յիշատակդ պիտի ըլլայ այսուհետեւ , և երջանկութիւնը քեզ սիրելի միշտ , վրադ կարեկցիլ , և երբեմն ալ քեզ տեսնել միայն . . . :

Ու սենեակէն դուրս ելաւ :

Նարդիկ , մինչդեռ երխտասարդը բակին մէջ առաջ կը քալէր , կը հեռանար , նայեցաւ անոր ետեւէն ամենէն աղեկէզ նայուածքով , դիտեց որ անոր թիկնեղ ու բարձր հասակը թանձր մթութեան խաւերուն մէջ հետզհետէ կ'անորոշանար , անյայտ կ'ըլլար վերջապէս . լսեց որ փողոցին դուռը , մ'ած շառաջու մով մը , կը գոցուէր իւր սիրականին վրայ : Այն ատեն , որպէս թէ իւր ներքին գործարանները իրարու ետեւէ դուրս մղուելու վրայ ըլլային , աղիողորմ հեկեկանք մը պայթեցաւ իր կուրծքէն , և լացաւ , լացա՛ւ երկար ատեն . . . :

Այս նշանաւոր տեսակցութենէն երկու շաբաթ ետքը , Ջարեհ Նարդիկի թախանձանքին համակերպելով կը նշանուէր

Օր. Մաքրուհիին հետ—պարոնին եղբորաղջկան տալը. վեց  
ամիս ետքը կամուսնանար անոր հետ :

Իսկ պարոն Սեփոն, Նարդիկին ամուսինը,— ո՛վ անհաս-  
կնալի կարգադրութիւն նախախնամութեան—Զարէհին ամուս-  
նանալէն երեք շաբաթ ետքը կը կնքէր իւր մահկանացուն . . . :

Դժբա՛ղա Նարդիկ . . . իւր համակերպութիւնը նախա-  
սահմանուած էր տեւելու այնքան որքան պիտի տեւէր իւր  
կեանքը . . . :

1905







2p

34

# ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Զագմահըրյար Եօգուլըր, Թիւ 29

Հաստատուած 1868ին

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստուերի հին դեմքերու 1635-1900, գրեց Յ.Գ. Մըմբեան	5
Կեանքի գործածութիւն, Հորտէյզպիւրի, թղթ. Գ. Ոսկեան	7
Լիակատար նոր երգարան կամ Ընդարձակ քնար Հայկական, 192 երես 172 երգ . . . . .	7 1/2
Կարմիր ժամուց, Արփիար Արփիարեան . . . . .	5
Պարեկ Բարոյական և Գործ Գասխարակ, Փ Հազարապ	4
Վեղարաւոր Հերոսը, գրեց Սմբատ Բիւրատ . . . . .	2
Մի անմեղ զոհ կամ Խորհակուած սէր, Աշուղ Շահնազար	2
Աւարայրի արծիւր կամ Վարդանանի, Ս. Բիւրատ . . . . .	3
Բիւզանդական Հայ կայսրեր ու կայսրուհիներ, 19 պտկր.	3
Բուրգերէն բանաստեղծական երկեր, Ս. Բիւրատ . . . . .	3
Կեսն. Իգմիրլեան եւ Գուրեան Ս. ներու, Ս. Գարամաճեան	2
Իսկալի զոնը, Աշուղ Շահնազար . . . . .	1
Սրբիս վերերը, բանաստեղծ. Աշուղ Շահնազար. . . . .	2
Ազատարար Բանակին յաղթական մուսքն ի Կ. Պոլիս . . . . .	12 1/2
Թապալեալ Փիլիկ ախպօր աղջիկ-սեօր, Տ. Փափազ	2
Ապսիլ Համիս Բ., Մերուժան Պարսամեան . . . . .	1
Ապսիլ Համիսի չեղիութիւնը, Տ. Շէփիկլեան . . . . .	1
Հայկական առածներ, 300 հատ, հաւաքեց՝ Թ. Ասլանեան	1
Հայերէն սղագրութիւն, Ա. մաս . . . . .	1
Մոլորեալ նամբորդը կամ Զինուորական օրելան, կատակերգութիւն 1 արար . . . . .	1
Երանոս աղբար կամ քաղաքեալ Վարժապետը, կատակերգութիւն 1 արար, Տ. Փափազեան . . . . .	1
Բարեկենդանի անկուսիները, կատակերգութիւն 1 արար	1
Իլավիլի եհնի եհմէֆ ֆիքապը, ալաթուրգա, ալաֆրանկա	5

Վերոյիշեալ գրատունը կը վաճառուին, կրօնական, պատմական, բանաստեղծական, թատերական, վիպական, դպրոցական գրքեր, ևն. ևն. :



